ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **05.05.2020թ.**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1000-Ն որոշման հավելված N 2-ի 19-րդ կետը, որոշվել է ԲԸՏՄ ղեկավարի տեղակալների թեկնածությունը և տեսչական մարմնի հաստիքացուցակին ու պաշտոնների անձնագրերին հավանության արժանացնելու հարցը անցկացնել հեռակա քվեարկությամբ:

Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2020 թվականի մայիսի 04-ին ժամը 09:00-ին և ավարտվել 2020 թվականի մայիսի 05-ին ժամը 18:00:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգ

Հարց 1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվելու համար Գնել Հասրաթյանի թեկնածությանը հավանություն տալու մասին:

Հարց 2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվելու համար Վրեժ Գալոյանի թեկնածությանը հավանություն տալու մասին:

Հարց 3. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակին և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին՝ ներառելով նաև հետագայում ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից ներկայացվող առաջարկությունների հիման վրա լրամշակումները:

Քվեարկությանը մասնակցել են՝

Է. Գրիգորյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Ս. Պապիկյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Ա. Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ս. Գալյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Պ. Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն (համաձայնությամբ)

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Ս. Ադամյան	- «Բնապահպանական հասարարական միություն» ՀԿ
Մ. Գրիգորյան	- «Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամ, աշխարհագրություն և երկրաբանության ֆակուլտետի դեկան, դոցենտ
Գ. Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու

Խորհրդի անդամներ Ա.Ասոյանի և Գ. Բալումյանի կողմից ներկայացվել են կարծիքներ, որոնք ընդունվել են ի գիտություն:

Քվեարկությունը համարվում է կայացած:
Քվեարկության արդյունքում.

N	Խորհրդի անդամ	Հարց 1	Հարց 2	Հարց 3
		թեկնածու Գնել Հասրաթյան,	թեկնածու Վրեժ Գալոյան	հաստիքացուցակ, պաշտոնի անձնագիր
1.	Է. Գրիգորյան	կողմ	կողմ	կողմ
2.	Ս. Պապիկյան	կողմ	կողմ	կողմ
3.	Ա. Ասոյան	կողմ	կողմ	կողմ
4.	Ա. Ավանեսյան	կողմ	կողմ	կողմ
5.	Ա. Պողոսյան	կողմ	կողմ	կողմ
6.	Ս. Գալյան	կողմ	կողմ	կողմ

7.	Պ. Խաչատրյան	կողմ	կողմ	կողմ

Քվեարկության արդյունքը՝

1) թեկնածու 1՝ Գնել Հասրաթյան՝ **7 կողմ, 0 դեմ,**
2) թեկնածու 2՝ Վրեժ Գալոյան՝ **7 կողմ, 0 դեմ:**
3) Տեսչական մարմնի հաստիքացուցակին և պաշտոնի անձնագրերին հավանություն տալ՝ **7 կողմ, 0 դեմ:**

Խորհրդի անդամներից 3-ը չեն քվեարկել:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

Հարց 1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի՝ Գնել Հասրաթյանի թեկնածությանը:

Հարց 2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի՝ Վրեժ Գալոյանի թեկնածությանը:

Հարց 3. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակին և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին՝ ներառելով նաև հետագայում ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից ներկայացվող առաջարկությունների հիման վրա լրամշակումները:

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Կ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ